ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Թեմա՝ Գեղագիտական դաստիարակության նպատակը, խնդիրները և մեթոդները <<Երաժշտություն>> առարկայի գործընթացում

Կազմեց՝ Հովհաննիսյան Բենիկ

<<Մեղրու թիվ 1 միրնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

Ղեկավար՝ Լուսինե Բալայան

Վերապատրաստող

կազմակերպություն՝ <<Կապանի N2 ավագ դպրոց >> ՊՈԱԿ

Կապան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....2

ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ 'ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ' ԱՌԱՐԿԱՅԻ ԳՈԾԸՆԹԱՑՈՒՄ.....3

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....13

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....14

ՀԱՎԵԼՎԱԾ 15

Ներածություն

Դպրոցականների դաստիարակության համակարգում կարևոր տեղ ունի գեղագիտական դաստիարակությունը, որը նպաստում է երեխայի հուզական ոլորտի զարգացմանը և զգայական փորձի հարստացմանը, ակտիվացնում նրա իմացական գործունեությունը, բացահայտում է նրա ստեղծագործական կարողությունները և խթանում դրանց զարգացումը:

Դպրոցականների գեղագիտական դաստիարակությունը ձևավորում է

• գեղագիտական գիտակցությունը (տարրական գիտելիքներ արվեստի և գեղեցիկի մասին, գեղեցիկը ճանաչելու, նկատելու և գնահատելու կարողություններ, գեղեցիկի պահանջմունքի և գեղագիտական ճաշակի դաստիարակություն):

• ինչպես նաև գեղագիտագեղարվեստական ընդունակություններն ու կարողությունները:

Ազգային երգը, պարը մեծ հնարավորություն են տալիս երեխաների գեղագիտական դաստիարակության զարգացման համար՝ ուսուցանելով գիտելիք (տեղեկություններ ազգային արժեքների մասին), ձևավորելով երաժշտական ճաշակ ու կարողություններ և գեղարվեստական հմտություններ:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել դպրոցականների գեղագիտական դաստիարակության առանձնահատկությունները, ինչպես նաև ցույց տալ <<Երաժշտություն>> առարկայի՝ որպես արդյունավետ միջոցի դերը ուսումնական գործընթացում:

Գեղագիտական դաստիարակության նպատակը, խնդիրները և մեթոդները <<Երաժշտություն>> առարկայի գործընթացում

<<Զգուշությամբ և երկյուղածությամբ մոտեցեք դաստիարակության գործին, խիստ փափուկ պաշտոն մըն է ձերը:Սխալ ուղղությամբ՝ ազգ մը կխորտակեք վերջը>>:

Կոմիտաս

Դպրոցականների դաստիարակության համակարգում կարևոր տեղ ունի գեղարվեստական դաստիարակությունը, որը հատուկ կազմակերպված մանկավարժական գործընթաց է՝ ուղղված երեխայի գեղագիտական զգացումների, կյանքում և արվեստում գեղեցիկի վերաբերյալ պատկերացումների ձևավորմանը, շրջապատող իրականության հանդեպ, գեղագիտական վերաբերմունքի, գեղագիտական վերաբերմունքի ձևավորմանը:

Գեղագիտական դաստիարակության խնդիրները ուղղված են սովորող ների՝ գեղեցիկը նկատելու, ճանաչելու, գնահատելու կարողությունների ձևավորմանը, ինչպես նաև հուզականորեն համարժեք արձագանքելու ունակությունների զարգացմանը, գեղագիտական ճաշակի դաստիարակմանը:

<<Երաժշտություն>> առարկան հանրակրթական դպրոցում հանդիսանում է արվեստի դասավանդման արդյունավետ միջոց: Երեխաները ընդգրկվում են երաժշտական ներդաշնակ <<աշխարհ>>՝ երգում, պարում, երաժշտություն ունկնդրում, հանդես գալիս նոր մտահաղացումներով, ստանում գեղագիտական հաճույք:

Երաժշտություն առարկայի նպատակն է դաստիարակել հոգևոր և բարոյագեղագիտական բարձր արժեքներով օժտված մարդ, երաժշտության գիտակից և ակտիվ ունկնդիր, որը կարող է արժևորել իր ազգային և համամարդկային երաժշտական մշակույթը:

Դպրոցական տարիքում երեխայի գեղագիտական դաստիարակության հիմնական նպատակը երեխաների գեղագիտական գիտակցության և ճաշակի ձևավորումն է, որը խթանվում է երաժշտության միջոցով:

Երաժշտությունը ձևավորում է վառ անհատական կերպարներ, վառ գույներ առաջացնում խոր հույզեր՝ շարժելով կատարողի և ունկնդրողի միտքը:

3

Անհրաժեշտ է դեռ վաղ հասակից, երեխաների մեջ առաջացնել, սեր դեպի երաժշտությունը, դեպի արվեստը: <<Երաժշտություն >> առարկայի գործունեության ձևերը՝ դասարանական երգեցողությունը, երաժշտության ունկնդրումը, պար, ռիթմիկ և երաժշտա-ռիթմիկ վաժություններ, երաժշտական խաղեր, նվագակցություն <<բնական հարվածային նվագարաններով>> օգնում են աշակերտներին տիրապետել երաժշտական արվեստին:

Դասարանական երգեցողությունը ամենակարևոր միջոցներից է, քանի որ երեխաները փոքր հասակից սովորում են երգել, դառնում երաժշտության կատարողներ : Ինքնուրույն երգելով կամ նվագելով՝ նրանք ավելի լավ են զգում և ըմբռնում երաժշտությունը, սիրով են լցվում երաժշտության հանդեպ:

Դասարանական երգեցողությունը զարգացնում է երեխաների լսողությունը, երգչական ունակությունները: Կարևոր է, որ շնչառությունից ճիշտ օգտվեն ունենան հստակ առոգանություն:

Երգեցողության խնդիրները

• ազգային, մանկական նյութի յուրացում

• ինտոնացիոն մաքուր երգեցողության մշակում

• երաժշտական ունակությունների զարգացում

• երգի կատարողական գրագիտության և կուլտուրայի մշակում

• ճաշակի ձևավորում

Երաժշտության ունկնդրման դասերի նպատակն է երեխաների մեջ սեր առաջացնել դեպի երաժշտությունը, զարգացնել նրանց երաժշտական ճաշակը, սովորեցնել նրանց լսելու կատարվող երաժշտական ստեղծագործությունը: Երաժշտության ունկնդրման դասերը լրացնում են աշակերտների այն գիտելիքները, երբ նա ստացել է երաժշտության և երաժշտության դասերին:

Երաժշտության ունկնդրման դասեր պետք է անցկացնել ուսման հենց 1-ին տարուց: 1-ին դասարանի երեխաներն մեծ սիրով են մասնակցում երաժշտության ունկնդրմանը:

Երաժշտության ունկնդրման ավարտից հետո պետք է պատմել ունկնդրումից ստացած իրենց տպավորումների մասին, ինչպիսի՞ն է

ստեղծագործության բնույթը (ուրախ, թախծոտ, տխուր, տեմպը արագ, հանդարտ, դանդաղ) ո՞վ է կատարում այն մենապա՞ը, թե՞ երգչախումբը, նվագարա՞նը, թե նվագախումբը և այլն: Այդ տարիքի երեխաները դժվարանում են բառերով ճիշտ ձևակերպել երաժշտությունից ստացած իրենց տպավորություններն ու զգացողությունները, դրա համար պետք է երեխաներին օգնել նրանց մտածողությունը խթանող հետևյալ հարցերը.

ա. Ի՞նչ տպավորություն ստացար:

բ. Ի՞նչ ես ուզում անել այդ երաժշտության ուղեկցությամբ երգել, պարել,

քայլել

գ.Ի՞նչ նվագարան էր հնչում:

դ. Ի՞նչ գույներով կներկայացնես այդ երաժշտությունը:

ՈՒնկնդրման գործընթացն իրականացվում է հետևյալ հերթականությամբ.

ա. Ուսուցչի մեկնաբանող խոսք բ. երաժշտական ստեղծագործության գեղարվեստական կատարում գ .դիդակտիկ նյութերի ցուցադրում դ. Երաժշտության բնութագրում:

Խմբական երգեցողությունը դպրոցում նպաստում է դպրոցականների երաժշտական ճաշակի զարգացմանը: Երգեցիկ խմբում մասնակցող երեխաները ձեռք են բերում երգչական ունակությունները: Դպրոցական միջոցառումների ժամանակ հայտնաբերվում են շնորհալի երեխաներ՝ ասմունքողներ, պարողներ, նվագողներ, երգողներ, որոնք իրենց ելութներով հարստացնում են այդ հանդեսների ծրագրերը:՝

- Գեղարվեստական երգեցողություն

Յուրաքանչյուր երգ, լինի պարզ կամ բարդ, փոքր կամ մեծ, պետք է կատարվի գեղարվեստական բարձր ճաշակով և արտահայտիչ ձևով: Երեխաներին պետք է ծանոթացնել կատարողական տարբեր ձևերի, օրինակ՝ տարբեր տրամադրությամբ և տարբեր շեշտերով պետք է կատարել քայլերգերը, քնարական երգերը, պարերգերը և այլն: Երեխաների երգեցողությունը պետք է լինի գեղեցիկ: Երեխան սիրում է երաժշտություն և կարողանում է տարբերել գեղեցիկ երգը տգեղից, լավը վատից: **5**

Գեղարվեստական երգեցողության համար գեղեցիկ և ճիշտ առոգանությունը անհրաժեշտ պայմաններից մեկն է: Երգչական ունակությունների ուսուցման զարգացման պրոցեսում պետք է հատուկ ուշադրություն դարձնել երեխաների ճիշտ առոգանության վրա, առանց դրա գեղարվեստական երգեցողություն լինել չի կարող: ՈՒնկնդիրը պետք է հասկանա ունկնդրվող երգի բովանդակությունը, իսկ առանց կատարողի լավ առոգանության տեքստը աղավաղվում է, երգի բառերը տեղ չեն հասնում, դրա համար երգը մնում է ունկնդրի համար անհասկանալի: Շատերը կարծում են, թե ուժեղ երգեցողության դեպքում է, որ երգն ըմբռնելի է լինում ունկնդրի համար: Դա սխալ է: Կարելի է երգել շատ ուժեղ, բայց բառերը վատ արտասանել, և կարելի է երգել մեղմ, բայց բառերը պարզ ու հասկանալի արտասանել: Հարկավոր է լավ արտասանել ձայնավորները ՝ օ, ա, ու, ի, է ՝, բերանի բացվածքին տալով արտասանվող հնչյունին համապատասխան և հարմար ձև:

Ձայնավոր հնչյունների լավ արտասանությունը օժանդակում է առոգանությանը: Առոգանության համար պետք է սովորեցնել արագ տեմպով երգող երգեր, որոնց մեջ կան կրկնվող բառեր ու հնչյուններ: Գեղարվեստական երգեցողության համար պետք է երեխաներին ծանոթացնել երաժշտական ստեղծագործության տեմպին և կատարման նրբերանգներին:

Երաժշտության գեղարվեստական կատարման համար մեծ նշանակություն ունի կատարվող երգի տեմպը գտնելը և տվյալ երգը իր իսկական տեմպով երեխաներին սովորեցնելը:

Երաժշտական ստեղծագործությունների տեմպերը նշանակվում են երգի սկզբից, իտալական տերմիններով: Դանդաղ տեմպերը նշանակվում են երգի՝ largo, Adagio, lento, չափավոր տեմպերը՝ Andante, Moderato և Allegreto, արագ տեմպերը՝ Allegro, Vivo, Prestisimo բառերով:

Երգեցողություն առանց նվագակցության և նվագակցությամբ

Կան երգեր, որոնք հորինված են առանց նվագակցության երգելու համար:

Խմբական այն երգեցողությունը, որը կատարվում է առանց նվագակցության կոչվում է a capella (ակապելա): Կոմիտասի բոլոր խմբական ստեղծագործությունները գրված են առանց նվագակցության՝ accapela

կատարելու համար:

A capella երգեցողությունը խմբական արվեստի ամենաբարձր տեսակներից մեկն է: Խմբական երգեցողությանը կարևոր տեսակն էլ նվագակցությամբ կատարվող երգեցողությունն է: Երգեցողությանը նվագակցում են տարբեր գործիքներ: Դաշնամուրը, որպես ամենահարուստ գործիքներից մեկը հարստացնում է երկձայն և եռաձայն խմբական երգերի գեղարվեստական կատարմանը և ձևավորմանը: Դաշնամուրի նվագակցությունը հնարավորություն է տալիս կոմպոզիտորին երգի և նվագակցության փոխադարձ օգնությամբ ստեղծել երաժշտական պատկերներ: Երաժշտական գործունեության մյուս ձևը երաժշտառիթմական և պարային շարժումն է, որը նպաստում է սովորողների հոգևոր և ֆիզիկական ուժերի զարգացմանը:

Ռիթմիկ և երաժշտա-ռիթմիկ վարժությունների նպատակը սաների երաժշտական ունակությունների, ռիթմի զգացողության զարգացումն է, հնչյունի տևողության ճիշտ կատարումը: Գործողության այս ձևի ընթացքում սովորողը կատարում է ունկդրվող կամ կատարվող ստեղծագործությունների ռիթմական նվագակցություններ, սովորում և կատարում է պարային շարժումներ:

Պարը իր շարժումային համակարգով մի լեզու է որն արտահայտում է մարդու հոգեվիճակը , հուզերն ու ապրումներնը՝ ուղեկցվելով երգով, երաժշտությամբ, հարվածային նվագարանների կամ ծափերի ռիթմիկ պատկերով: Շատ կարևոր է, որ ուսուցանվի մաքուր ավանդական պար: Ավանդական պարերը կարող են պարել բոլորը, դրանք բնական շարժումներից են կազմված, մատչելի են հասկանալի:

Երեխաների սիրած գործունեության տեսակներից է խաղը, երաժշտական շարժախաղերը, որոնք կարևոր դեր են կատարում դպրոցականների շարժումային գործունեության գործում: Շարժախաղերը հնարավորություն են տալիս երեխաներին ցուցադրելու ստեղծագործական երևակայություն:

Շատ լավ է ցուցադրել երգի բովանդակությունը պատկերող գեղարվեստական պլակատ: Երեխաներին կարելի է հանձնարարել մատիտով կամ ներկերով նկարել երգի բովանդակությունը: Եթե երգի մեջ կան երկխոսություններ, ապա երգը սովորելուց հետո դերերը բաժանել և խաղի միջոցով ավելի աշխուժացնել երգը, օրինակ ՝ Ճուտիկ մանկական օպերան (խոսք՝ Հակոբ Աղաբաբյանի, երաժշտություն՝ Մարտին Մազմանյան):

7

Հեղինակի դերը կկատարի դասարանը, աշակերտներից մեկին կարելի է տալ Ճուտ Մարիի դերը, մեկ ուրիշին՝ Աքլորիկի, մյուսին էլ՝ Թխսի դերը:

Լսելով օպերային երաժշտությունը, կատարելով երգերը, պարերը, քայլ երգերը՝ երեխաները ծանոթանում են օպերայի տեսակին, առանձնահատկություններին: ‘Աքլորիկի ,թխսի և ճուտիկների երգը’ մատուցվում է դաշնամուրի նվագակցությամբ, ապա այն, աշակերտները լսում են սինֆոնիկ նվագախմբի և երգիչների կատարմամբ՝ ծանոթանալով ‘օպերա’ հասկացությանը:

Երեխաները սովորելով ‘Ճուտիկ ’ մանկական օպերայից ‘Աքլորիկի, թխսի և ճուտիկների երգը’՝ կկարողանան որոշել երաժշտության տեսակը, տեմպը, ռիթմը կձևավորվեն գեղարվեստախոսքային արտահայտիչ խոսք ունենալու կարողությունները, կզարգացնեն երաժշտական և բեմական ընդունակությունները, կդաստիարակվեն գեղագիտական բարձր ճաշակով:

Հետազոտությունը ցույց տվեց, որ այդ ուսումնական պարապմունքը արդյունավետ էր և ուսանելի: Ըստ այդմ ստորև ներկայացված է աղյուսակ՝ համապատասխան չափանիշներով:

Այսպիսի երգախաղերը երեխաների մեջ մեծ աշխուժություն են առաջացնում , սեր են զարթեցնում դեպի արվեստը, երաժշտությունը և երեխան անհամբեր սպասում է երգեցողության դասին, որպեսզի հագեցնի իր գեղարվեստական պահանջը:

8

Գործունեության հաջորդ ձևը անհատական ստեղծագործում կամ իմպրովիզացիան է, որի գլխավոր նպատակը սովորողների ստեղծագործական ունակությունների զարգացումն է:

Իմպրովիզացիայի բոլոր միջոցները երեխաների մեջ զարգացնում են գեղարվեստական երևակայություն, բարձրացնում երաժշտական գործունեության ակտիվությունը:

Երեխաները բոլոր երաժշտական գիտելիքները ձեռք են բերում երաժշտությամբ գործնական զբաղվելու ընթացքում, ծանոթանում են Երաժշտության մեջ դրանց կիրառմանը:

Երեխաների երաժշտական դաստիարակության գործում մեծ նշանակություն ունի երաժշտությունը, ռիթմը և պարարվեստը:

Ռիթմի նպատակն է երեխաներին սովորեցնել երաժշտական ընկալման մասին և զարգացնել ռիթմիկ զգացողություն: Երաժշտության ժամին դասի հիմնական նպատակն է՝

• Զարգացնել երեխաների հույզերն արտահայտելու կարողությունը

• Զարգացնել երգը արտահայտիչ կատարելու կարողությունը

• Մեկ շնչով մի քանի նոտա մաքուր հնչերանգով երգելու հմտությունը:

Ռիթմիկայի ընթացքում պետք է ուշադրություն դարձնել ճիշտ կեցվածքի, շարժումների սահուն զարգացմանը:

Դպրոցում երեխաներին ծանոթացնում ենք ժողովրդական մշակույթին, որոնք երեխաների մոտ առաջացնում են հայրենասիրություն:

Որպեսզի դասերն արդյունավետ լինեն և օգուտ բերեն երեխաներին, անհրաժեշտ է ստեղծել հարմարավետ միջավայր:

Երաժշտությունը մշտապես օգտագործվել է երեխաներին հանգստացնելու ,սփոփելու զբաղեցնելու և կրթելու համար: Երաժշտության կենտրոնի աշխատանքը նպաստում է երեխաների համակողմանի զարգացմանը: Նրա առավել ակնհայտ նշանակությունը կապված է հուզական զարգացման հետ: Յուրաքանչյուր մշակույթ ունի սիրո, փաղաքշանքի, ուրախության, **9**

խիզախության, տխրության երաժշտական դրսևորման իր ուրույն պարզունակ օրինակները, որոնք երեխաները հեշտորեն կարող են յուրացնել և դրանց միջոցով արտահայտել իրենց զգացմունքները:

Եթե դասերը ճիշտ են կազմակերպվում, երեխան դառնում է կայուն, հարգալից վերաբերմունք է ունենում ուսուցչի նկատմամբ; Դրա համար հարկավոր է՝

• Ճիշտ երաժշտական նվագակցություն

• Դասերն անցկացնել խաղային եղանակով

• Պետք է լսել երեխաների ցանկությունները

• Պետք է հանգիստ բացատրել, թե երեխան ինչ սխալ է արել

Ռիթմիկ դասերի ընթացքում երեխաները սովորում են պարի հիմնական տարրերը, անցկացվում են ֆիզիկական վարժություններ: Սա հատկապես կարևոր է տարրական դասարանի աշակերտների համար, քանի որ նրանց համար կարևոր է հնարավորություն տալ դուրս հանել իրենց էներգիան: Նման գործողությունների ընթացքում կազմակերպվում են խաղեր:

Գեղարվեստական և գեղագիտական զարգացում

Մեծ հնարավորություններ է տալիս ՏՀՏ օգտագործումը: Տեղեկատվական ներկայացումները, տեսանյութերը օգնում են երեխաներին ծանոթացնելու գործընթացը երաժշտությամբ արվեստին հետաքրքիր դարձնելու համար: Օգտագործելով ՏՀՏ-ն, հնարավորություն ենք ունենում տեսողական տեղեկատվություն փոխանցել երեխաներին:

ՏՀՏ-ն կիրառելով երաժշտական դասերը բարձրացնում են երեխաների ճանաչողական հետաքրքրությունը երաժշտության նկատմամբ:

Նոր մեթոդների կիրառումը

Երաժշտության ժամերին օգտագործում ենք ուսուցման նոր մեթոդներ: Ուսուցման մեթոդը մանկավարժական գործունեության մի միջոց է, որով իրականացվում է ուսուցչի և աշակերտի համագործակցությունը՝ ուղղված ուսումնառության նախանշված արդյունքին:

Ուսուցման մեթոդների դասակարգման հիմքում դրվում են հետևյալ հատկանիշները.

- Ճանաչողական աղբյուրները
- Տրամաբանական սկզբունքը
- Ուսուցման տիպը
- Սովորողների ինքնուրույնության մակարդակը
- Ուուսուցիչ գործունության տեսակ

Ինտերակտիվ մեթոդների կիրառումը նպատակ ունի զարգացնելու սովորողների, ինչպես մտավոր, այնպես էլ զգայական կարողությունները:

Դասերի ընթացքում կազմակերպվում են անհատական, խմբային, զույգերով աշխատանք: Մեթոդներով դասերը վարելու հիմնական քայլերն են.

- Դասի նպատակների սահմանում
- Տեղեկատվության մատուցում

• Ուսուցչի աջակցությամբ աշակերտների աշխատանքի կազմակերպում

• Աշխատանքների վերջնական արդյունքի ներկայացում

Երաժշտության դասին օգտագործում ենք նաև <<Մտագրոհ, Մտքի քարտեզագրում >> մեթոդը:Այս մեթոդը օգնում է որևէ թեմա կամ խնդիր դասակարգել և բաղդատել մեծից մինչև փոքր <<տաքսոնների>>: Այսինքն՝ ներկայացնել տվյալ նյութը, որպես ամբողջություն, քայլ առ քայլ մասնատել և դասակարգել:

Մտագրոհ շրջանակ



Իմաստի ընկալում

Իմաստի ընկալման փուլում նոր նյութը մատուցվում է 'ներածական զրույց' մեթոդով, ստեղծագործության ունկնդրումով 'հարց ու պատասխան' մեթոդով, T-աձև աղյուսակի օգտագործումով:

Ուսումնական նյութը ուսուցանել ֆրազներով, վերլուծել ունկնդրած ստեղծագործությունները, համեմատել դրանք՝ նշելով առանձնահատկությունները: Երգերը բնական նվագարաններով նվագակցել՝ ընդգծելով զարկերը:

Կշռադատման փուլ

Քառաբաժան մեթոդի կիրառումը կնպաստի պարզելու դասավանդած նյութի յուրացվածության մակարդակը, արտահայտելու իրենց զգացմունքները, սովորածը՝ նոր գիտելիքները, գաղափարներ, մտքերը, իսկ 4-րդ բաժնում՝ լոգո պատկերելու ինչ-որ նկար թեմայի վերաբերյալ կապահովեն միջառարկայական կապը նկարչության հետ:

Ի՞նչ գիտեի	Ի՞նչ սովորեցի
Ի՞նչ զգացի	Նկար

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գեղագիտական կրթությունը դպրոցներում բացահայտում է երեխաների մոտեցումները մարդկային աշխատանքի գեղեցկության ու վեհության նկատմամբ: Զարգացնելով երեխաների հշողությունը, մտածողությունը, հետաքրքրասիրությունը հնարավորություն է տալիս սիրել և ընդունել, տեսնել և գնահատել արվեստը: Երաժշտությունը մի յուրահատուկ լեղու է, որը շրջապատի համար մատչելի է դարձնում ներքին ապրումները, դարձնելով դրանք 'լսելի': Եաժշտությունը որոշ ժամանակ տևող հնչյունների հիացմունք առաջացնող ամբողջություն է ներդաշնակության մեջ:

Երաժշտությունը մեծ ազդեցություն ունի նարդու հոգեկանի վրա՝ առաջացնելով բազմազան հույզեր: Ձայնային տատանումները ընկալվելով լսողական օրգանի միջոցով փոխանցվում են ինֆորմացիան դեպի ուղեղի համապատասխան մասեր:Տատանումները անմիջականորեն ազդում են մարմնի և մեր կատարած գործունեության վրա: Երաժշտությունը հանգստացնող, երբեմն նաև բուժող միջոց է: Հայտնի է, որ օրգանիզմի վրա ուժեղ ազդեցություն ունի դասական և ժողովրդական երաժշտությունը, աշակերտները այն ընկալում են լավ, կարողանում են վերլուծել և զարգանում է գեղագիտական ճաշակը:

ՈՒսումնասիրելով 'Երաժշտություն' առարկան՝ առարկայի նպատակն, խնդիրները և մեթոդները սովորողների երաժշտական գործունեությանը պարզ դարձավ, որ

սովորողների գեղագիտական դաստիարակության լավագույն միջոցը երեխաների մոտ երաժշտական բարձր պատկերացումների, երաժշտական ճաշակի ձևավորումն ու զարգացումն է:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. 5-6 տարեկաններ. Դաստիարակի ուղեցույց
2. Յու. Վ. Յուզբաշյան

   Արվեստագիտության գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
3. Ս. Ս. Փահլևանյան

   Արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր
4. Վ. Ի. Ավետիսյան

   Մանկանվարժական գիտությունների թեկնածու
5. ‘Զանգակ-97’ հրատարակչություն, ուսուցչի մեթոդական ձեռնարկ
6. Նախադպրոցական մանկավարժություն

   Նաիրա Գրիգորյան

14

Հավելված

Դասի պլան՝ 2-րդ դասարան

Դասի թեման- Ինչի՞ մասին է պատմում երաժշտությունը

<<Աքլորիկի, թխսի և ճուտիկների երգը>>

ՈՒնկնդրում- Լ, Վ. Բեթհովենի <<ՈՒրախ, տխուր>> ստեղծագործությունը

ՈՒսուցանել- << Աքլորիկի, թխսի և ճուտիկների երգը>>

Դասի նպատակը- ՈՒսուցանել երգը, ունկնդրել Բեթհովենի <<ՈՒրախ, տխուր> ստեղծագործությունը. ունենալ սեփական կարծիք բնույթի, բովանդակության մասին:

ՈՒսուցանող- Ծանոթացնել մանկական օպերայի առանձնահատկություններին

Զարգացնող- Զարգացնել երգչային ձայները ճանաչելու և տարբերելու կարողությունը:

Դաստիարակող- Դաստիարակել սեր մանկական օպերայի հանդեպ

Վերջնարդյունք- Կարողանա տարբերակի օպերային երաժշտությունը, երգի արտահայտիչ, նկարագրական բնույթով և մաքուր ինտոնացիայով:

Մեթոդական հնարքներ-Տ-աձև աղյուսակ, մտագրոհ մեթոդ, դերախաղ:

Միջառարկայական կապ-Գրականություն, կերպարվեստ, պարարվեստ:

Դասի ընթացքը

Խթանում- ՈՒնկնդրումից հետո մտագրոհի միջոցով ճշտել աշակերտների նախնական գիտելիքները օպերայի մասին:



Ամփոփում ենք երեխաների պատասխանները.

Իմաստի ընկալում- Ծանոթացնել մանկական օպերայի առանձնահատկություններին, ուսուցանել երգը՝ կատարել այն դերախաղով:

Կշռադատում- Տ-աձև աղյուսակի միջոցով վերլուծել <<ՈՒրախ, տխուր>> ստեղծագործությունը: Դերախաղի միջոցով իմանալ, թե ինչպես են աքլորիկը, թուխսը և ճուտիկները գտնում կորած ճուտիկին:

Լ. Վ. Բեթհովեն

Ուրախ	Տխուր
Ուրախ տրամադրություն	Դանդաղ տեմպ
Արագ տեմպ	Թախծոտ
Ուրախ բնույթ	
Պարային	